ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Է. ԽԱՉԻԿՅԱՆ

Հռոմեական տերությունը Օկտավիանոս-Օգոստոսի օրոք վերածվելով կայսրության մ. թ. ա. վերջին տասնամյակներում, ռազմադիվանագիտական ակտիվ պայքար ծավալեց Արևելքում իր դիրքերն ամրապնդելու և սահմանները ապահովելու համար։ Այս նույն ժամանակահատվածում Հայաստանում գահակալեցին Արտաշիսյան հարստության վերջին երեք ներկայացուցիչները։

Մ. թ. ա. 20 թ. հռոմեա-պարթևական պայմանագրի կնքումով Հայաստանը ընկավ Հռոմի գերիշխանության տակ, իսկ հակառակորդ տերությունների միջև հաստատվեց տևական խաղաղություն։ Հայաստանի վերջին անկախ գահակալ Արտաշես II-ը զոհ գնաց Հռոմի հրահրած դավադրության, իսկ հռոմեական լեգեոններով երկիր ներխուժած Տիրերիոս Ներոնը (ապագա Տիբերիոս կայսրը) հանդիսավորությամբ Հայոց արքա թագադրեց սպանվածի եղբորը՝ Տիգրան III-ին։ Այսուհետև Հռոմը իրեն իրավունք էր վերապահում Արտաշիսյան հաջորդ գահակալներին նշանակել իր հայեցողությամբ, որով և պետք է ապահովվեր Հռոմի գերիշխանությունը Հայաստանի նկատմամբ։

Տիգրան III-ը՝ Հայոց արքա Արտավազդ II-ի որդին, արքայական համարյա ողջ ընտանիքի հետ միասին գերվել է Անտոնիոսի կողմից (մ. թ. ա. 34 թ.) և տարվել Ալեքսանդրիա, իսկ ապա Օկտավիանոսի հաղթանակից հետո՝ Հռոմ (մ. թ. ա. 30 թ.)[1]։

Հայաստանում Տիգրան III-ի կառավարումը տևական չեղավ, նրա մահից հետո, ժառանգորդման իրավունքով, Հայոց գահը անցավ նրա որդուն՝ Տիգրան IV-ին և դստերը՝ Էրատոյին[2]։ Պ. Պտուկյանի կարծիքով, Տիգրան III-ի՝ ուշ շրջանի դրամների վրա, պարթևականի նմանությամբ, քառանկյունի լեգենդների առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ իր կառավարման վերջին տարիներին Տիգրան III-ը վարել է անկախ քաղաքականություն[3]։ Նման կարծիքի են ուսումնասիրողներից Ն. Դեբևոյսը և Ֆ. Թեգարթը[4]։ Իսկ Հռոմը, ոչ առանց հիմքի, Տիգրան III-ի ժառանգների գահակալումը, որ իրականացել էր առանց իր գիտության և համաձայնության, համարեց իր շահերի բացահայտ ոտնահարում[5]։ Այս ամենը փաստորեն ի չիք էր դարձնում մ. թ. ա. 20 թ. ձեռք բերած Հռոմի բոլոր հաջողությունները։ Հրահատ IV-ի հետ Հռոմը շարունակում էր բարեկամական հարաբերություններ պահպանել, որն ապահովում էր Պարթևստանի չեզոքությունը Հռոմի՝ Հայաստանի գործերին միջամտության դեպքում։

Տակիտոսի կարճ հաղորդումից հայտնի է, որ հռոմեացիների միջամտությամբ Տիգրան IV-ի և Էրատոյի կառավարումը ընդհատվում է, և Հայոց Արքա է հռչակվում Արտավազդ III-ը՝ Արտավազդ II-ի որդին[6]։ Նույն հաղորդումից հասկացվում է, որ Արտավազդ III-ը հաստատվել էր Հայոց գահին՝

---

[1] Gassius Dio, Historia Romana. XLIX, 39—40.

[2] *Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 290։*

[3] Z. P. Bedoukian, Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, 31—33, n. 143—147.

[4] N. Debevoise, A political history of Parthia, Chicago, 1938, p. 142; F. Teggart, Rome & China, Berkeley. 1939, p. 47.

[5] Austieg und Niedergang der Römischen Welt, Berlin-New York, Bd. IX, 1976, p. 76.

[6] Tacitus, Annaluses, II, 4.

հռոմեական զորքերի օգնությամբ։ Պահպանվել են Արտավազդ III-ի դրամները, որոնց վրա նա պատկերված է ավանդական Արտաշիսյան թագով։ Մեզ հասած տեղեկությունների համաձայն Արտավազդ III-ը բավական տարիքով պետք է լիներ. համարյա քառորդ դար ապրել էր Հռոմում։

Արտաշիսյան հարստության վերջին երեք գահակալների կառավարման ժամանակագրությունը մասնագիտական գրականության մեջ դեռևս վերջնականապես պարզված չէ։ Ճշգրիտ հայտնի են միայն Տիգրան III-ի գահակալության սկզբնական տարեթիվը՝ մ. թ. ա. 20 թ.[8] և վերջին գահակալ Տիգրան IV-ի մահվան տարին՝ 1 թ.[9]։ Տիգրան IV-ի և Էրատոյի գահակալության սկզբնաթիվը, ինչպես և Արտավազդ III-ի կարճատև կառավարումը, թվագրվում են մոտավորապես։ Ըստ «Քեմբրիջյան հին պատմության» ժամանակագրական աղյուսակների՝ Արտաշիսյան վերջին գահակալների կառավարման տարիները թվագրվում են հետևյալ կերպ[10].

Տիգրան III—մ. թ. ա. 20—8 թթ.
Տիգրան IV և Էրատո—մ. թ. ա. 8—5 թթ. (I կառավարումը)
Արտավազդ III—մ. թ. ա. 5—2 թթ.
Տիգրան IV և Էրատո—մ. թ. ա. 2 թ.—1 թ. (II կառավարումը)։

Մոտավորապես նմանատիպ թվագրում են առաջարկում Հ. Սեյրիգը և Է. Բիկերմանը[11]։ Այդ թվագրումն ընդունում են նաև Հ. Մանանդյանը, Գ. Սարգսյանը, Մ. Պանին[12] և ուրիշներ։ Ավելի մանրամասն ուսումնասիրության դեպքում, սակայն, նշված արքաների կառավարման որոշ տարեթվեր կարելի է փոքր ինչ որոշակիացնել։ Հավանորեն ավելի ընդունելի է Տիգրան III-ի կառավարման վերջը և Տիգրան IV-ի ու Էրատոյի կառավարման սկիզբը թվագրել մ. թ. ա. 6 թ., երբ, համաձայն Ավետոնիոսի և Դիոն Կասիոսի հաղորդումների, Օգոստոս կայսրը իր խորթ որդի Տիբերիոսին հանձնարարեց վերականգնել հռոմեական գերիշխանությունը Հայաստանում[13]։ Նման թվագրության հետևում են Պ. Սայքսը, Մ-Լ. Շոմոնը[14] և ուրիշներ։

Նախորդ տարում կոնսուլ ընտրված Տիբերիոսի լիազորություններն ավարտվում էին մ. թ. ա. 6 թ. օգոստոս ամսին, և նոր հանձնարարությունն իրագործելու համար նա հինգ տարով ստանում է տրիբունական իշխանություն (tribunicia potestas)։ Ընտանեկան գժտությունների հետևանքով Տիբերիոսը առանձնանում է Հռոդոս կղզում, այդպես էլ չկատարելով հանձնարարությունը[15]։ Ռ. Սայմի կարծիքով Տիբերիոսի համար Հայաստանը հարմար առիթ ծառայեց անձնական նկատառումներով քաղաքական ասպարեզից հեռանալու համար[16]։ Տիբերիոսի՝ Հռոդոս հեռանալու պատճառները ավելի մանրամասն վերլուծել են Գ. Բովերսոքը և Բ. Լևիկը[17]։

---

[7] V. Ehrenberg, & A. H. M. Jones, Documents illustrating the reigns of Augustus and Tiberius, Oxford, 1949, p. 102, n. 181; Z. P. Bedoukian, Coinage...., p. 35, n. 160·

[8] Cass. Dio, LIV, 9, 3—4.

[9] Cass. Dio, LV, 10a, 4—5·

[10] Cambridge ancient history, Cambridge Mass., vol. X, 1934, p. 1058.

[11] H. Seyrig, Tresor Monetaire de Nisibe (Ravue Numismatique, Ve, № 17, p. 111); Э. Бикерман, Хронология древнего мира, М., 1976, с. 201.

[12] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 290—297, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 631—633; M. Pani Roma e i re d'Oriente da Augusto a Tiberio Bari, 1972, p. 35.

[13] Suetonius Tiberius, 9; Cass. Dio, LV, 9, 4.

[14] P. Sykes, A history of Persia, London, 1969, vol. II, p. 373; Aufstieg und Niedergang..., p. 76.

[15] Suet. Tib., 10; Cass. Dio, LV, 10, 18.

[16] R. Syme, The Crisis of 2 B. C. Munchen, 1974, p. 4—5.

[17] Caesar Augustus. Seven aspects, Ed. F. Millar, Oxford, 1984, p. 180; B. Levick, Tiberius retirement to Rhodes in 6 B. C. (Latomus, 1972, vol. 31, fasc. 3, p. 779—802).

«Հետո, Օգոստոսի հրամանով, իշխանությունը հայերի վրա ստացավ Արտավազդը,—հաղորդում է Տակիտոսը,—որը կարճ ժամանակ անց նրանց (հայերի) կողմից գահընկեց արվեց, ոչ առանց մեր (հռոմեացիների) վնասի»[18]։ Տակիտոսի այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Արտավազդին Հայոց արքա հաստատելու գործը հանձնարարվել է ոչ թե Հռոմից ուղարկված Օգոստոս կայսեր հատուկ պատվիրակին, այլ ինչ-որ պաշտոնատար անձի հենց տեղում, որը և գործել է «Օգոստոսի հրամանով»։ Պարզ չէ, թե ով, երբ և ինչպես է հաստատել Արտավազդին Հայոց գահին։ Մեր աղբյուրները, որոնք սովորաբար հաղորդում են քիչ թե շատ նշանակալից զորական ուժերի՝ Արևելք ուղարկվելու մասին, այս անգամ լռում են։ Հետևաբար, «Օգոստոսի հրամանը» տեղում իրականացնել կարող էր միայն այնպիսի պաշտոնատար անձ, որը դրա համար բավարար իշխանություն և, որ ավելի կարևոր է, բավարար զորական ուժ ուներ։ Հռոմի արևելյան տիրույթներում այդ պաշտոնատար անձը Ասորիքի կառավարիչն էր։ Ըստ Հովսեփոս Փլավիոսի, մ. թ. ա. 6—4 թթ. Ասորիքի կառավարիչն էր Կվինտիլիոս Վարոսը[19], որին էլ, հավանաբար, Օգոստոս կայսրը կարգադրել էր Արտավազդ III-ին հաստատել Հայոց գահին։ Այսպիսով, Արտավազդի ռազմական ուժերը պետք է, որ կազմված լինեին Ասորիքում գտնվող հռոմեական լեգեոններից և, գուցե, Հռոմի դաշնակիցներ Կապադովկիայի արքա Արքեղայոսի և Պոնտոսի արքա Պոլեմոնի օժանդակ զորքերից։ Արտավազդ III-ի՝ Հայոց գահին հաստատվելու հնարավոր տարեթիվը պետք է համարել մ. թ. ա. 5 թ. ամռան վերջը, հաշվի առնելով Արտավազդի՝ Հռոմից Արևելք գալու ժամանակը, ինչպես և արշավանքի նախապատրաստման և անցկացման տևողությունը։

Աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել Տիգրան IV-ի և Էրատոյի գրության մասին նրանց հորեղբոր գահակալության շրջանում։ Տեղեկությունների բացակայության պատճառով շատ հետազոտողներ լռության են մատնում կամ էլ շրջանցում են այս հարցը։ Հ. Մանանդյանը ենթադրում է, որ Տիգրան IV-ը և Էրատոն փախել էին պարթևների մոտ[20]։ Նույն կարծիքին է և Պ. Պոուկյանը[21]։ Այս տեսակետը, սակայն, քիչ հավանական է. Տիգրան IV-ը չէր կարող ապաստան և օժանդակություն փնտրել պարթևական արքունիքում, քանի որ այս իրադարձությունների պահին պարթևական գահին էր դեռևս Հրահատ IV-ը, որը բարեկամական հարաբերություններ էր պահպանում Հռոմի հետ։ Վերջին տարիներս հարցի յուրօրինակ բացատրություն է առաջարկել իտալացի ուսումնասիրող Մ. Պանին, ըստ որի Արտավազդ III-ը անձամբ Հայաստանում չի եղել, այլ գտնվել է Ասորիքում, իսկ նրա դրամները կտրված են հռոմեական իշխանությունների կողմից՝ պրոպագանդիստական նպատակներով[22]։ Այս վարկածը, սակայն, լրիվ հակասում է Տակիտոսի և Դիոն Կասիոսի հաղորդումներին։

Իրադարձությունների ընթացքը, հենվելով աղբյուրների հաղորդումների վրա, կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. Արտավազդ III-ը հայ հասարակության հռոմեամետ ուժերի աջակցությամբ, հռոմեական լեգեոնների ուժերով գրավում է մայրաքաղաքը և Հայոց արքա հռչակվում։ Դա չէր կարող առաջ չբերել հայրենասեր ուժերի դիմադրությունը, որոնց գլուխ և պետք է կանգնեին Տիգրան IV-ն ու Էրատոն, որոնք մնալով երկրում, շարունակում էին պայքարը հռոմեական դրածոյի դեմ՝ հայրենիքի անկախության վերականգնման համար։ Պայքարում ի վերջո հաղթանակ են տանում հայրենասեր ուժերը[23]։ Արտավազդ III-ը գահընկեց է արվում և երկրից վտարվում, հռոմեացիները զգալի կորուստներ են կրում։ Բայց պայքարը դրանով չի

---

18 Tacit, Ann., II, 4.

19 Josephus Flavius, Antiquitatae Indicae, XVIII, 250

20 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 292։

21 Z. P. Bedoukian, Coinage..., p. 36.

22 M. Pani, նշվ. աշխ., էջ 43։

23 Aufstieg und Niedergang..., p. 84.

ամարտվում. Արտավազդ III-ը հռոմեացիների օժանդակությամբ շարունակում էր հավակնել Հայոց գահին, գուցե և պահպանում էր իշխանությունը երկրի որոշ տարածքների նկատմամբ։

Տիգրան IV-ի և Էրատոյի իշխանության վերականգնման տարեթվի որոշման, ինչպես և հետագա իրադարձությունների հաջորդականության բացահայտման բանալին տալիս է Դիոն Կասիոսի հետևյալ հաղորդումը. «Տիգրանը (IV-ը) սկզբնապես (կրկին գահակալելուց հետո) դեսպաններ չուղարկեց, բայց երբ փոքր-ինչ անց Արտաբազը (իմա՝ Արտավազդ III-ը) հիվանդացավ և մահացավ, Օգոստոսին նվերներ ուղարկեց, ելնելով այն բանից, որ այլևս մրցակից չունի, նամակում իրեն «արքա» չկոչելով և կարծես թագավորությունը նրանից (Օգոստոսից) խնդրելով, նա (Օգոստոսը) այս հանգամանքների ազդեցության ներքո, և միաժամանակ զգուշանալով պարթևների հետ պատերազմից ընդունեց նվերները և հուսադրելով հանձնարարեց Գայոսի մոտ Ասորիք գնալու»[24]։

Դիոնի խոսքերից կարելի է եզրակացնել, որ Տիգրան IV-ը, վերահաստատվելով Հայոց գահին, անմիջապես չէր փորձում Հռոմի ճանաչմանը արժանանալ, քանզի Հռոմը շարունակում էր օժանդակել Արտավազդ III-ին, որի մահից հետո միայն Տիգրան IV-ը բանակցություններ սկսեց Օգոստոսի հետ, ձգտելով Հռոմի կողմից պաշտոնական ճանաչման արժանանալ՝ որպես Հայոց արքա։ Այս նույն ժամանակ՝ մ. թ. ա. 2թ. թունավորելով հորը՝ Հրահատ IV-ին, պարթևական գահին տիրացավ Հրահատ V-ը (Հրահատակը), որը, ձգտելով ամրապնդել իր դիրքերը, անցավ ակտիվ արտաքին քաղաքականության[25]։ Ռ. Գիրշմանը մինչև իսկ ենթադրում է, որ Հրահատ IV-ի սպանության պատճառը եղել է նրա՝ Հայաստանի նկատմամբ հավակնություններից հրաժարվելը[26]։ Հրահատ V-ը սկսեց օգնել Հայաստանի հայրենասեր ուժերին[27], որոնց գլուխ կանգնած էր Տիգրան IV-ը՝ ընդդեմ հռոմեական դրածո Արտավազդ III-ի։

Հաշվի առնելով Պարթևստանի հետ հարաբերությունների սրումը, Օգոստոս կայսրը ընդունեց Տիգրան IV-ի բանակցությունների առաջարկը և, հավանաբար, պատրաստվում էր վերջինիս Հայոց արքա թագադրել իր թոռ Գայոս Կեսարի ձեռքով, այսպիսով Հայաստանը պահելով Հռոմի գերիշխանության ներքո։ Այս ամենից հետևում է, որ Տիգրան IV-ի վերահաստատվելը Հայոց գահին պետք է թվագրել Պարթևստանում մ. թ. ա. 2 թ. պալատական հեղաշրջումից զգայիորեն վաղ, մոտավորապես մ. թ. ա. 3 թ. վերջին, իսկ Արտավազդ III-ի մահը՝ մ. թ. ա. 2 թվին։ Հանրագումարի բերելով վերը քննվածը, կարելի է անել հետևյալ եզրակացությունները. Տիգրան III-ի կառավարման տարիները ճիշտ կլինի թվագրել մ. թ. ա. 20—6 թթ., Տիգրան IV-ի և Էրատոյի կառավարումը՝ մ. թ. ա. 6—1 թթ., Արտավազդ III-ի կարճատև կառավարումը՝ մ. թ. ա. 5—4 թթ., որն ավելի շուտ երևութական էր, քանի որ նրա իշխանությունը մ. թ. ա. 4—3 թթ. տարածվում էր լոկ Հայքի մի մասի վրա, իսկ երկիրը շարունակում էր պայքարը հռոմեական դրածոյի դեմ։ Տիգրան IV-ը 1 թվականին, տակավին երիտասարդ տարիքում, սպանվեց Հայաստան ներխուժած «բարբարոս» ցեղերի դեմ մարտում։ Նրա մահով ավարտվեց և հայ ժողովրդի պատմության մեջ մտած ավանդ ներդրած Արտաշիսյան հարստությունը։

Մի քանի խոսք Արտաշիսյան վերջին գահակալների դրամների մասին։ Եթե Արտավազդ III-ի դրամաների հարցը ընդհանուր առմամբ պարզ է, ապա առայժմ Տիգրան IV-ին և Էրատոյին վերագրվող դրամների հարցում վերջնական պարզություն չկա։ Որոշակի դժվարություններ են առաջանում և Տիգրան IV-ի ու Տիգրան V-ի դրամների դասակարգման հարցերում։ Այս-

[24] Cass. Dio, LV, 10a, 4—5.
[25] Jos. Flav. Ant. Iud., XVIII, 2, 4; Cass. Dio, LV, 10a.
[26] R. Ghirshman, Iran, Harmondsworth, 1954, p. 255.
[27] Cass. Dio, LV, 10, 18.

պես՝ Կ. Բասմաջյանը Տիգրան IV-ին էր վերագրում որոշ դրամներ, որոնք նորագույն ուսումնասիրություններում հատկացվում են Տիգրան III-ին[28]։ Միասնական կարծիք չունեն և ժամանակակից ուսումնասիրողները։ Ըստ Խ. Մուշեղյանի դասակարգման, Տիգրան IV-ին են վերագրվում երկու տարբեր տիպի դրամներ։ Առաջին տիպին հեղինակը դասում է, այսպես կոչված, «մորուքավոր Տիգրանի» դրամները, որոնց վրա արքան «կրում է պատկառելի մորուք և ունի տարեց մարդուն բնորոշ դիմագծեր»[29]։ Երկրորդ տիպին Խ. Մուշեղյանը դասում է «Նոր Տիգրանի» դրամները, որոնց հակառակ երեսին պատկերված է Էրատոն, իսկ արքան ունի երիտասարդի դիմագծեր[30]։ Ընդ որում, եթե դրամների առաջին տիպը վերագրվում է Տիգրան IV-ի առաջին կառավարմանը, ապա երկրորդ տիպը՝ նրա երկրորդ կառավարման շրջանին։ Որքան էլ տարօրինակ է, դուրս է գալիս, որ Տիգրան IV-ը իր կառավարման վերջում ուղղակի երիտասարդացել է։

Այլ դասակարգում է առաջարկում Պ. Պտուկյանը։ «Մորուքավոր Տիգրանի» դրամները նա վերագրում է Տիգրան IV-ի կառավարման առաջին շրջանին[31]։ Տիգրան IV-ի և Էրատոյի երկրորդ կառավարմանը հեղինակը վերագրում է որոշ դրամներ, որոնց վրա «կարծես թե նշմարվում են երկու դիմանկար»[32]։ Արքան կարծես ունի նույնպիսի պատկառելի մորուք, մյուս դիմանկարը (Էրատո ?) դժվար է տարբերել։ Բացակայում է և Էրատոյի անունը պարունակող լեգենդը, որպիսիք առկա են «Նոր Տիգրանի» դրամների վրա։ Ինչ վերաբերում է «Նոր Տիգրանի» այն դրամներին, որոնց վրա պարզորոշ դրոշմված է Էրատոյի պատկերը՝ նրա անունը պարունակող լեգենդով, ապա դրանք Պ. Պտուկյանը վերագրում է Տիգրան V-ի և Էրատոյի համատեղ կառավարմանը[33]։

Գրավոր աղբյուրներում որևէ հիշատակություն Տիգրան V-ի և Էրատոյի համատեղ կառավարման մասին չկա։ Տակիտոսը[34] և Դիոն Կասիոսը[35] հաղորդում են միայն Տիգրան IV-ի և Էրատոյի համատեղ կառավարման մասին։ Հատկանշական է և այն, որ «մորուքավոր Տիգրանի» դրամները իրենց լեգենդի գրության ձևով որոշակիորեն տարբերվում են Արտաշիսյան մյուս արքաների դրամներից։ Այսպես՝ եթե Տիգրան III-ի և «Նոր Տիգրանի» դրամների վրա լեգենդը գրվում էր ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ", ապա «մորուքավոր Տիգրանի» դրամների վրա վերջին երկու բառերը փոխում են իրենց տեղերը՝ „ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ ΜΕΓΑΛΟΥ": Նմանատիպ գրություն է՝ և «կարծես թե երկու դիմանկարով» դրամների վրա։

Այս նկատառումներից ելնելով կարծում ենք, որ Տիգրան IV-ին վերագրվող տարբեր տիպի դրամներից նրանը պետք է համարել միայն «Նոր Տիգրանի» դրամները։ Այսօրվա դրությամբ մեզ հայտնի են «Նոր Տիգրանի» դրամների 3 տիպ՝ հետևյալ լեգենդներով.

1. ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΗΣ: ΕΡΑΤΩ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΑΦΗ
2. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ: ΕΡΑΤΩ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΑΦΗ

---

28 Կ. Հ. Բասմաջեան, Հայկական ընդհանուր դրամագիտություն և Հայաստանի վերաբերյալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 38—40։

29 Խ. Մուշեղյան, Հին Հայաստանի դրամային շրջանառության պատմությունից (Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3, էջ 75)։

30 Նույն տեղում, էջ 76։

31 Z. Bedoukian, նշվ. աշխ., էջ 32—35, № 148—159։

32 Նույն տեղում, էջ 37։

33 Նույն տեղում, էջ 38—39, № 165—167։

34 Tacit, Ann., II, 4.

35 Cass. Dio, LV, 10a, 5.

3. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ: ΚΑΙΣΑΡ ΘΕΟΣ ΘΕΟΥ ΥΙΟΣ ΣΕΒΑΣΤΟΣ

Ակնհայտ է, որ առաջին տիպի դրամները պետք է վերագրել Տիգրան IV-ի և Էրատոյի կառավարման առաջին շրջանին, երբ Արտավազդ III-ը դեռևս չէր հավակնում Հայոց գահին։ «Արքայից արքա» տիտղոսը խոսում է այն մասին, որ Տիգրան IV-ը անկախ տիրակալ էր։ Դրամների երկրորդ տիպը, հավանաբար, պետք է վերագրել այն ժամանակաշրջանին, երբ Տիգրան IV-ին, Պարթևստանի աջակցությամբ, վերադարձվել էր Հայաստանի ողջ տարածքը՝ երկրից վտարելով Արտավազդ III-ին։ Իսկ դրամների երրորդ տիպը վերաբերում է Տիգրան IV-ի կառավարման վերջին տարիներին, երբ նա, դիվանագիտական բանակցությունների մեջ մտնելով Օգոստոս կայսեր հետ, հավաստիացում ստացավ իր իշխանության ճանաչման մասին։

К ВОПРОСУ О ХРОНОЛОГИИ ПРАВЛЕНИЯ ПОСЛЕДНИХ ЦАРЕЙ ИЗ ДИНАСТИИ АРТАШЕСЯНОВ

А. Э. ХАЧИКЯН

Резюме

Хронология правления последних Арташесянов в научной литературе все еще остается спорной. На основании сопоставления сообщений источников и последовательности исторических событий правление указанных царей можно датировать следующим образом: царствование Тиграна III—20—6 гг. до н. э., совместное правление Тиграна IV и Эрато—6 г. до н. э.—I г. Кратковременное царствование Артавазда III—5—4 гг. до н. э. было эфемерным, так как власть его распространялась на часть территории, страна же продолжала борьбу за независимость против римского ставленника.

Пока нет определенной ясности и в нумизматических данных правления Тиграна IV и Эрато. Изучение монетных легенд приводит нас к выводу, что из различных типов монет, приписываемых Тиграну IV, к периоду его правления относятся лишь так называемые монеты «нового Тиграна».

ON THE CHRONOLOGY OF THE LAST ARTAXIAD KINGS

KHACHIKIAN A. E.

Summary

The chronology of the last Artashesians' government still remains disputable in scientific literature. On the basis of comparison of information from sources and sequence of historical events the government of the indicated kings may be dated as follows: the reign of Tigran III—20 6 B. C., joint rule of Tigran IV and Erato—6 B. C.—1 A. C. The short reign of Artavazd III 5—4 B. C. was ephemeral as his power spread only on part of the territory. and the country continued the struggle for independence against the Roman protege.

There is no definite clearness yet in the numinsmatic data regarding tbe reign of Tigran IV and Erato. The study of coin legends leads us to the conclusion that from the various types of coins ascribed to Tigran IV only the so-called „New Tigran" coins have to do with the period of his reign.